ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

15 մայիս, 2019 թվականի № 21-Լ

«ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԾԻՔԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԼՈՒԾԱՐՄԱՆ ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Իրականացնելով «Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) բաժնետերերի ընդհանուր ժողովի լիազորությունները, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 69-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 28-րդ հոդվածի 6-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի դեկտեմբերի 14-ի N 752 որոշման Հավելված N 1-ով հաստատված կարգի 13-րդ կետի պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի տեղակալի 2019 թվականի մայիսի 13-ի թիվ 02/14.21/3263-19 գրությունը՝ Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել Ընկերության լուծարման հանձնաժողովի կողմից ներկայացված Ընկերության լուծարման միջանկյալ հաշվեկշիռը 2019 թվականի մայիսի 1-ի դրությամբ՝ համաձայն սույն որոշման Հավելված 1-ի:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ա. ՇԻՐԻՆՅԱՆ

15 մայիս, 2019 թվականի

ք. Երևան